Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-346-07.11.2019-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ և 6.2-րդ կետերով.

«6.1) հեռավար (դիստանցիոն) կրթություն՝ կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով՝ սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով,

6.2) կրեդիտային համակարգ՝ միջնակարգ կրթության ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատման, կրթական ծրագրերի յուրացման կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ,»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. Պետական ուսումնական հաստատությունները անվանակոչվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են

խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ ուսումնական հաստատության տնօրենի ընտրության գործընթացում:»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Մրցույթի ժամանակ տնօրենի թեկնածուի հետ խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ տվյալ հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի շրջանակում:»:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է.

1) տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին.

2) տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «և կրթության ձևը» բառերը.»:

Հոդված 7. Օրենքի 29-րդ հոդվածի՝ `

1) 1-ին մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16) սահմանում է ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը:»:

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 18.1-ին կետով.

«18.1) սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը.»:

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ՝

1) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ կետ.

«6.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների ընտրված տնօրենի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով.»,

2) 23-րդ կետից հանել «վերահսկողություն, պետական տեսչավորում և» բառերը,

3) 25-րդ կետում «հանրապետական» բառից հետո լրացնել «և դպրոցական» բառերը,

4) 26.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.2-26.15-րդ կետերով.

26.2) սահմանում է հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը.

26.3) սահմանում է միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը.

26.4) սահմանում է պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը.

26.5) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը.

26.6) սահմանում է ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատողների, աշակերտների ու ծնողների էթիկայի նորմերը (վարքականոն).

26.7) սահմանում է ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը և հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը.

26.8) մշակում և հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը.

26.9) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգ.

26.10) սահմանում է «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերը, դրանց պանջները և անցկացման կարգերը.

26.11) սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգը.

26.12) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման գործակիցները և նորմատիվները, ֆինանսավորման կարգերը,

26.13) հաստատում է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը.

26.14) սահմանում է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը.

26.15) հաստատում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գրադարաններում դասագրքերը, ուսումնաօժանդակ գրականությունը և էլեկտրոնային կրթական ռեսուրսները գործածության երաշխավորելու կարգը:»:

Հոդված 9. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ուսումնական հաստատությունում կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է հանրակրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»:

Հոդված 10. Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Արտաքին գնահատման ընթացքում օգտագործվում են հանրակրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրականացրած ստուգումների արդյունքները:»:

Հոդված 11. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասից հանել «՝ կախված սովորողների թվից» բառերը,

2) 4-րդ մասի վերջին պարբերությունից հանել՝ «Լրացուցիչ ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը:

Հոդված 12. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետով սահմանված կրեդիտային համակարգը ներդրվում է միայն միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ):»:

Հոդված 13. Սույն օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

Կ-346-07.11.2019-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ և 6.2-րդ կետերով.

«6.1) հեռավար (դիստանցիոն) կրթություն՝ ***կրթական*** ծրագրի իրականացման ~~***այլընտրանքային***~~ ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, ***սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով,***

6.2) կրեդիտային համակարգ՝ միջնակարգ կրթության ~~***երրորդ աստիճանի (10-12-րդ դասարաններ)***~~ ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատման, կրթական ծրագրերի յուրացման կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ,»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. Պետական ուսումնական հաստատությունները անվանակոչվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում «Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական

խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ ուսումնական հաստատության տնօրենի ընտրության գործընթացում:»:

Հոդված ~~2~~ 4. Օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Մրցույթի ժամանակ տնօրենի թեկնածուի հետ խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ ~~***որի ընթացքում հավակնորդին տրվում են հարցեր***~~ տվյալ հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի~~ց~~ **շրջանակում**:»:

Հոդված ~~3~~ 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է. 1) տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին.

2) տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:»:

~~***Հոդված 3.***~~ ~~Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով.~~

~~«4.1. Բոլոր այն ուսումնական հաստատություններում, որտեղ չկա տվյալ առարկան դասավանդող համապատասխան ուսուցիչ, այդ առարկայի դասավանդումը կարող է կազմակերպվել հեռավար (դիստանցիոն) ձևով՝ ապահովելով սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը:»:~~

Հոդված ~~4~~ 6. **Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «և կրթության ձևը» բառերը.»:**

Հոդված ~~4~~ 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 16-րդ կետը ***շարադրել հետևյալ խմբագրությամբ.***

«16) սահմանում է ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը:»:

2) ***1-ին մասը լրացնել նոր՝ 18.1-ին կետով.***

«18.1) սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը.»:

~~***Հոդված 5.***~~ ~~Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում 18-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18.1-րդ կետով.~~

~~«18.1) սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը.»:~~

Հոդված ~~6~~ 8. Օրենքի 30-րդ հոդվածի ***1-ին մասի*** ՝

1) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ կետ.

«6.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների ընտրված տնօրենի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով.»,

~~1.~~ **2)** 23-րդ կետից հանել «վերահսկողություն, պետական տեսչավորում» բառերը,

~~2.~~ **3)** 25-րդ կետում «հանրապետական» բառից հետո լրացնել «և դպրոցական» բառերը,

~~3.~~ **4)** 26.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.2- 26.15-րդ կետերով.

«26.2) ~~սահմանում է դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման կարգը.~~

26.2) սահմանում է հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության

պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը.

26.3) սահմանում է միջնակարգ կրթության ~~***երրորդ աստիճանի (10-12-րդ դասարաններ)***~~ կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը.

26.4) սահմանում է պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը.

26.5) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը.

26.6) սահմանում է ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատողների, ***աշակերտների ու ծնողների*** էթիկայի նորմերը (վարքականոն).

26.7) սահմանում է ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը և հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը.

26.8) մշակում և հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի ~~***օրինակելի ձևը.***~~ ***մշակման պահանջներն ու ձևաչափը.***

26.9) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգ.

26.10) սահմանում է ~~*«Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դասղիարակ» մրցույթների կարգերը.*~~ ***«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերը, դրանց պանջները և անցկացման կարգերը.***

26.11) սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգը.

26.12) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների **իրականացման** գործակիցները և նորմատիվները, ֆինանսավորման **կարգերը,**

26.13) հաստատում է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը.

26.14) սահմանում է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը.

~~26.14) *հաստատում է հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը.*~~

~~*26.15) հաստատում է հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը.*~~

~~*26.16*~~***) 26.15)*** *հաստատում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գրադարաններում դասագրքերը, ուսումնաօժանդակ գրականությունը և էլեկտրոնային կրթական ռեսուրսները գործածության երաշխավորելու կարգը:»:*

Հոդված ~~7~~ 9. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ուսումնական հաստատությունում կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է հանրակրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»:

Հոդված ~~8~~ 10. Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Արտաքին գնահատման ընթացքում օգտագործվում են հանրակրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրականացրած ստուգումների արդյունքները:»:

Հոդված ~~9~~ 11. Օրենքի 35-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասից հանել «՝ կախված սովորողների թվից» բառերը,
4) 4-րդ մասի ~~*4-րդ կետից*~~ ***վերջին պարբերությունից հանել՝*** «Լրացուցիչ ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը:

Հոդված 12. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետով սահմանված կրեդիտային համակարգը ներդրվում է միայն միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ):»:

Հոդված ~~10~~ 13. Սույն օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչև 2020 թվականի ~~հուլիսի~~ ***սեպտեմբերի 1-ը:***

Հոդված ~~11~~ 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-346-07.11.2019-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	*առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.*	*նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը).*	*առաջարկը (փոփոխությունը, լրացումը).*	*առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը.*	*առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան	**Հոդված 1**	Շարադրել հետևյալ խմբագրության. «6.1) հեռավար (դիստանցիոն) կրթություն՝ կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանա ծ կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով»:	Ընդունվել է	Ընդունվում է
2.		**Հոդված 1**	6.2-րդ կետից հանել «երրորդ աստիճանի (10-12-րդ դասարաններ) » բառերը	Ընդունվել է	
3.		լրացնել	Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

		Հոդված 2.	բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով. «8. Պետական ուսումնական հաստատությունները անվանակոչվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմի կողմից սահմանված կարգով:»:		
4.	ՀՀ կառավարություն	լրացնել Հոդված 3.	Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ ուսումնական հաստատության տնօրենի ընտրության գործընթացում:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես	**հոդված 2, փոխված՝ 4**	Օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «13. Մրցույթի ժամանակ տնօրենի թեկնածուի	Ընդունվել է	Ընդունվել է

	Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան		հետ խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ տվյալ հավակնորդի ներկայացրած զարգացման շրջանակում:»:		
6.		**Լրացնել Հոդված 5**	Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով. «1.1. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է. 1) տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին. 2) տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:»:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 3.	Հանել. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով. «4.1. Բոլոր այն ուսումնական հաստատություններում, որտեղ չկա տվյալ առարկան դասավանդող համապատասխան ուսուցիչ, այդ առարկայի դասավանդումը կարող է կազմակերպվել հեռավար (դիստանցիոն) ձևով՝ ապահովելով սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան	**Հոդված 3**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով. «4.1. Միջնակարգ կրթության հիմնական ծրագրերը հեռավար ձևով կարող են կազմակերվել սույն հոդվածով սահմանված հետևյալ բացառիկ	Առաջարկվել է դեպքերը սահմանել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի	Չի ընդունվել՝ հաշվի առնելով հեղինիակաի և պատգամավորների համաձայնությունը

			դեպքերում և որոշակի ժամկետով, 1) միջնակարգ կրթության համապատաս-խան ծրագրով նախատեսված առարկայի ուսուցչի թափուրը տեղը չի համալրվել երկու անգամ հայտարարված մրցույթի արդյունք-ներով, և եթե մինչ այդ սպառվել են առկա կրթության ձևը ապահովելու բոլոր միջոցները. 2) երեխան տևական ժամանակ հիվանդ է վարակիչ հիվանդությամբ, 3) երեխան մրցույթների, օլիմպիադային մասնակցելու կամ այլ հարգելի պատճառով ժամանակավորապես գտնվում է օտար երկրում և այդ մասին նրա օրինական ներկայացուցիչը տեղեկացրել է կրթության կառավարման պետական լիազորված մարմնին:»	կողմից սահմանված կարգով Պատգամավորները և հեղինակը համաձայնել են նախագծում չընդգրկվել, հարցի կարգավորումը թողնել ենթաօրենսդրա-կան ակտին	
9.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան	**Լրացնել Հոդված 6**	Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «և կրթության ձևը» բառերը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան	**Հոդված 4** **Հոդված 5** **Փոխված՝ 7**	Օրենքի 29-րդ հոդվածի միավորել և խմբագրել հետևյալ կերպ. 1) 1-ին մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 2) «16) սահմանում է ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ կառավարություն	**Հոդված 7**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 18.1-ին կետով. «18.1) սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը.»:»		
12.	ՀՀ կառավարություն	**Հոդված 6 Փոխված՝ 8**	Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-րդ կետ. «6.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների ընտրված տնօրենի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով.»	Ընդունվել է	Ընդունվել է
13.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան		«26.2»-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «26.2) սահմանում է հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
14.			23.3-րդ կետից հանել «երրորդ աստիճանի (10-12-րդ դասարաններ) բառերը »	Ընդունվել է	Ընդունվել է
15.			26.6-րդ կետում «աշխատողների,» բառից հետո լրացնել «աշակերտների և ծնողների բառերը»	Ընդունվել է	Ընդունվել է
16.			26.8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «26.8) մշակում և հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատության	Ընդունվել է	Ընդունվել է

			զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը.»:		
17.			26.10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «26.10) սահմանում է «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերը, դրանց պանջները և անցկացման կարգերը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	ՀՀ կառավարություն		Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետում 26.14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «26.14) սահմանում է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան		26.14 և 26.15-րդ կետը միավորել, խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. «26.15) հաստատում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գրադարաններում դասագրքերը, ուսումնաօժանդակ գրականությունը և էլեկտրոնային կրթական ռեսուրսները գործածության երաշխավորելու կարգը:»:»	Ընդունվել է	Ընդունվել է
20.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ	Հոդված 9 Փոխված՝ 11	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքի 35-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասից հանել «՝ կախված սովորողների թվից» բառերը, 4-րդ մասի վերջին պարբերությունից հանել՝ «Լրացուցիչ ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է	Ընդունվել է

	Հովհաննես		կառավարությունը» բառերը:»:		
21.	Հովհաննիսյան Սոֆիա Հովսեփյան	Լրացնել Հոդված 12.	Հոդված 12. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով. «8. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետով սահմանված կրեդիտային համակարգը ներդրվում է միայն միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ):»:	Ընդունվել է	Ընդունվել է
22.		Հոդված 10 Փոխված 13	«հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «սեպտեմբերի 1-ը» բառերով:		